

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐ*

«ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
1919 Թ. ՄԱՅԻՍԻ 28-Ի ԱԿՏԸ.

պատմություն և արդիականություն»,
Երևան, 24-ը մայիսի, 2019 թ.

* Ծավալային խնդիրների պատճառով գիտաժողովի զեկույցներից մեկը՝ **Արարատ Մ. Հակոբյանի** «Միացյալ Հայաստանի անկախության ակտը: Ընդունման 100-ամյակի առթիվ» լույս է տեսել «Վեմ»-ի նախորդ համարում (էջ 25-66): Նույն պատճառով **Կարեն Պ. Հայրապետյանի** «Հատվածականության համախտանիշի հաղթահարման ՀՀ իշխանությունների քաղաքականությունը (1918 թ. օգոստոս - 1919 թ. փետրվար) զեկույցը տպագրվելու է «Վեմ»-ի հաջորդ համարում:

ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՍԱԿԱՆԸ

Անցյալից՝ դեպի ապագա*

Բանալի բառեր - Միացյալ Հայաստան, Մեծ Հայք, քաղաքակրթական միջավայր, սրբազնացված տարածք, եվրոպական լուսավորականություն, հայ քաղաքական ազգ, գիտատեխնոլոգիական առաջընթաց, համազգային կոնսենսուս, տեխնոլոգիական հասարակություն:

Միացյալ Հայաստանի անկախության՝ 1919 թ. մայիսի 28-ի պետական ակտի ընդունման 100-ամյակի ոգեկոչումը մեզ համար ոչ միայն առանձին քաղաքական իրադարձության քննության առիթ է, այլև նրանով խորհրդանշվող՝ ազգի ու հայրենիքի միասնության քաղաքական կերպավորումների ու դրանց հիմքում ընկած գաղափարների բացահայտման հնարավորություն ինչպես հայոց պատմության ուսումնասիրության դիաքրոնիկ, այնպես էլ՝ սինքրոնիկ հարթությունների վրա:

Ընդ որում՝ առաջինը կոնկրետ դարաշրջանում՝ Հայաստանի առաջին Հանրապետության օրոք, արձանագրված պատմական ինվարիանտի քննության առիթ է, իսկ երկրորդը՝ ոչ միայն մեր անցյալի ու ներկայի, այլև ներկայի ու ապագայի միասնության շուրջ բովանդակային դիսկուրս սկսելու հնարավորություն: Դա թույլ կտա վերականգնել մեր հանրային պատմության այն հանգրվանները, երբ նա փորձել է քաղաքական կերպարանք հաղորդել ազգային միասնության իր տեսլականին: Եվ ամենակարևորը՝ սրանով կղրվեն ազգային միասնության այն նոր տեսլականի հիմքերը, որոնք կարող են համապատասխանել գլոբալացող աշխարհին բնորոշ արժեքային-քաղաքակրթական նոր իրողություններին:

* Ընդունվել է տպագրության 20.08.2019:

Հայոց պատմության յուրաքանչյուր դարաշրջան ունեցել է, պայմանականորեն ասած, **Միացյալի** իր ըմբռնումը՝ Մեծ ու Փոքր Հայքերի միացման այդպես էլ անկատար մնացած ցանկությունից մինչև Արևելյան ու Արևմտյան Հայաստանները, իսկ այսօր՝ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը մեկ պետաքաղաքական անոթի մեջ ներառելու քաղաքական առաջադրանքը: Դրանով հանդերձ՝ **Միացյալի** համար մեր համառ պայքարը Հայոց պատմության դիաքրոնիկ հարթության վրա մինչ օրս ցուցանում է ընդամենը մեկ շրջափելի հետևանք՝ հաջորդական թագավորությունների անկում, Արևմտյան Հայաստանի հայաթափում, Հայաստանի առաջին Հանրապետության կործանում: Հարց է առաջանում. արդյո՞ք մեր հայրենիքի միասնականությունը վերականգնելու՝ հայերիս ցանկությունն էր նման գահավիժումների պատճառը, թե՞ դրա համար եղել են այլ, միանգամայն օբյեկտիվ պատճառներ: Քանի որ Ղարաբաղյան շարժումով մեր անկման անիվը հետ շրջելու հերթական փորձն ենք արել, այսօր պարտավոր ենք գտնել այս երևույթի սկզբնապատճառը, ինչի համար հայ պատմագիտությունն իր հիշեցնող, զգաստացնող ու նաև սթափեցնող խոսքն ունի ասելու ներկա սերնդին:

Դրա համար մենք պետք է պատասխանենք հիմնական հարցին՝ ի՞նչն է եղել **Միացյալի** կորստյան հիմնապատճառը: Պատմության հարուստ փորձը վկայում է, որ ի սկզբանե ինքնակա Մեծ Հայքի՝ իբրև ֆիզիկա-աշխարհագրական իրողության, խարխլումը մեզանում սկիզբ է առել այն ժամանակներում, երբ մեր գիտակցված կամքը, բախվելով օտար ու թշնամական քաղաքակրթական միջավայրերին, անզոր է գտնվել հաղթահարելու դրանց մարտահրավերները: Այսինքն՝ **Միացյալի** կորուստը՝ որպես հայությանը համակած գոյաբանական ճգնաժամի արտահայտություն, եղել է Հայաստանը շրջապատող **քաղաքակրթական միջավայրի** փոփոխության արդյունքն ու հետևանքը: Գիտակցելով նման օբյեկտիվ մարտահրավերի հանդեպ մեր սեփական անզորությունը՝ **Միացյալի** ֆիզիկա-աշխարհագրական չափորոշիչների փոխարեն սկսել ենք մեր ներսում փնտրել միասնության նոր հարացույցներ՝ հոգևոր, մշակութային, տնտեսական և այլ կովանների միջոցով փորձելով փոխհատուցել ինքնակազմակերպման քաղաքական չափորոշիչների կորուստը:

Սկսած Հայոց Մեծ դարձի ժամանակներից՝ Մեծ Հայքի աշխարհագրական ու ժողովրդագրական հիմքերի խարխլման, այսինքն՝ հայրենի հողերի կտորակման և ազգի հատվածականացման հանգրվանները համընկել են մեզ շրջապատող քաղաքակրթական միջավայրի փոփոխության շրջափուլերին: Ու քանի որ այդ ժամանակներից քաղաքակրթական առումով դեպի քրիստոնյա աշխարհը դիմաշրջված Հայաստանի ճակատագիրը կախման մեջ է հայտնվել ոչ թե նրա

ակտիվ, այլ պասիվ դիմադրողականությունից, ազգովի որդեգրել ենք հոգու պահպանման համար մարմնի զոհաբերման խորհուրդը՝ մեր նոր կենսակերպը հաստատելով թշնամու և օտարի¹ տարանջատման սկզբնուփ վրա: Ժամանակագրական առումով այս գործընթացն ունեցել է երկու հիմնական հանգրվաններ.

ա) Արշակունյաց հարստության կործանման շրջանում առաջին անգամ ուրվագծված հոգևոր հայրենիքի մեսրոպյան հանճարեղ նախագծից մինչև Մեծ Հայքի տարածքում մեր վերջին ամբողջական թագավորության՝ Բագրատունյաց հարստության անկումը կիլիկյան մշակութային վերջալույսով փոխհատուցելու ջանքերը,

բ) սելջուկյան արշավանքներին հաջորդած մոնղոլների և ապա՝ կարա և ակ-կոյունլու ցեղերի տիրապետությամբ Հայաստանը շրջապատող քաղաքակրթական միջավայրի ամբողջական փոփոխության և համընդհանուր խավարի հաստատման պայմաններում ձեռնարկված՝ Մայր աթոռի լույսը Սսից կրկին Սբ. Էջմիածին վերադարձնելու՝ 1441 թ. հերոսական քայլը և դրա հետևանքները:

Առաջին շրջանում մենք կորցրել ենք Միացյալ՝ իբրև ֆիզիկական իրողություն, իսկ երկրորդում վերականգնել ենք այն մեր հոգիներում իբրև հայրենի հողի վրա գոյատևող պետականազուրկ կրոնական համայնք:

Ուստի պետականության կորստից հետո սեփական հողի վրա մեր գերեվարված մարմնի ամբողջականության ընկալումը տեղափոխել ենք Մեծ Հայքը որպես հավատո նահատակների հուշարձանների ու դրանց տակ հանգչող սրբերի ու առաքյալների հանգստարան դիտարկող սրբազնացված տարածքի ամբողջականության ընկալման հարթություն: Միացյալ Հայաստանի գաղափարը միասնական սրբատեղիի վերածած մեր եկեղեցին իր «Հայաստանյայց» տիտղոսի մեջ է ամփոփել Սուրբ Էջմիածինը, Մշո Սուրբ Կարապետը, Վարագա ու Նարեկա, Մուղնու ու Գանձասարի վանքերը և այլ սրբավայրերը կրոնական համայնքի միասնականության խորհրդանիշերի վերածելու իրողությունը: Դա ոչ միայն Հայաստանի տարածքում, այլև հարկադրաբար նրանից դուրս՝ Լեհաստանում, Հունգարիայում, Նոր Զուլայում, Ղրիմում և ապա՝ Նոր Նախիջևանում և այլ գաղթօջախներում հաստատված հայության պարբերական ուխտագնացությունների միջոցով հնարավորինս պահպանել է ազգի ու հայրենիքի միասնության ըմբռնումը:

¹ Միջնադարում մեզանում իշխող պատկերացումների համաձայն՝ թշնամին ոչ այնքան մեզ ֆիզիկապես, որքան հոգեպես ստրկացնողն էր, քանզի առաջինը սոսկ օտար էր, ով գերում էր մեր անցավոր մարմինը, իսկ երկրորդը՝ հավերժական հոգին:

Ուստի միջնադարի մեր մեծ մտածողները «ազգ» հասկացության որոշարկման առաջնային հիմքը համարել են ոչ այնքան տարածքը, լեզուն և ազգակցական կապերը, որքան հավատն ու եկեղեցական ավանդույթը, այսինքն՝ դավանաբանությունը, ծեսերն ու արարողությունները: Ըստ «կրոնական ազգի» բանաձևը հեղինակած Գրիգոր Տաթևացու՝ ազգերի տարբերությունը սահմանելու համար հարկ է «առաել միաբանութիւն ասել զորս կանոնական սահմանադրութեամբ է, քան որ գաւառաւ և լեզուաւ»²: Քանի որ միջնադարում «ազգը» կրոնական համայնքի վերածված Հայաստանյայց առաքելական եկեղեցու հետևորդների ամբողջությունն էր, հայ ազգի մեջ էին մտնում, օրինակ, հայադավան ուղիները, և հայ ազգից դուրս էին հայտնվում հարկադրաբար իսլամացած կամ կաթոլիկություն և բողոքականություն ընդունած հայերը: Դրանով հանդերձ, որքան էլ օտարների կողմից բաժանվեր ու վերաբաժանվեր Հայաստանը, հոգևոր պատյանի մեջ նա պահպանում էր իր ամբողջականության՝ **Միացյալի** ըմբռնումը: Սակայն դրան զուգահեռ աստիճանաբար ուրվագծելով Թուրքիայի ու Պարսկաստանի, իսկ հետագայում՝ Թուրքիայի ու Ռուսաստանի միջև բաժանված նույն հանրույթի երկու խոշոր հատվածների ներսում երկու նոր ենթահինքնությունների ի հայտ գալու փաստը՝ միջնադարից մեզ ժառանգություն մնացած այդ «**հոգևոր Միացյալը**» նոր ժամանակներում ենթակա էր նոր կերպափոխման:

Նոր ժամանակներում Հայաստանի՝ որպես մեկ ամբողջության քաղաքական ըմբռնումի վերականգնման գիտական հիմքերը դրվել են Վենետիկում հաստատված Մխիթարյան հայրերի կողմից, իսկ Հայաստանի ու հայության նոր միասնության ձևավորման արժեքային-քաղաքակրթական հենասյունները ստեղծվել են եվրոպական լուսավորականության գաղափարների հիման վրա: Բայց ի տարբերություն գիտական ըմբռնումին բնորոշ ունիվերսալիզմի՝ երկրորդ՝ արժեքային ընկալմանը դարաշրջանային կաղապարի դեր էր վերապահված: Որովհետև ինչպես հելլենիզմը՝ անտիկ աշխարհում կամ քրիստոնեական մշակույթը՝ միջնադարում, եվրոպական լուսավորականությունը սկզբում այն նոր լուծույթն էր, որը կրկին տրոհում ու մասերի էր բաժանում մեզ, և ապա այն թախմորը, որը նորից միավորում էր մեզ մի կողմից՝ ամբողջական ազգի, իսկ մյուս կողմից՝ ամբողջական հայրենիքի վերածվելու ճանապարհին:

Տրոհման գործընթացը ծավալվել է՝ ազգը աշխարհաբար լեզուն ու կրթությունն է (**Խ. Աբովյան**), լեզուն ու մշակույթն է (**Ստ. Նազարյանց**), ազգը «Մեր Հայրենիքի» ազատագրման համար մղվող հեղափոխական պայքարն է (**Մ.**

2 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 552:

Նալբանդյան), ազգը որոշակի տարածքում ստեղծվող տնտեսական ուժն է (**Գր. Արծրունի**) երկար շարքի միջոցով, որի վերջին օղակում նորացվող ազգին էին միացվում անգամ իսլամացած հայերը՝ Գր. Արծրունու հանդեպ առաջ բերելով Հայաստանյայց եկեղեցու սուր հակազդեցությունը:

Միավորման նոր հարացույցը հանդես է եկել որպես իր իրավունքների համար պայքարող ամբողջության նոր, հեղափոխական ըմբռնում՝ ազատության նալբանդյանական կոչին գումարելով ազգի ու հայրենիքի միասնության ու անբաժանելիության **րաֆֆիական բանաձևը**:

Նոր ժամանակներում Հայաստանի ու հայության՝ որպես մեկ ամբողջության այս նոր ըմբռնումը քաղաքական պայքարի ասպարեզ է տեղափոխվել 1960-ականների սկզբներին՝ ձևակերպվելով որպես արևելահայերի ու արևմտահայերի մերձեցման քաղաքական պահանջ: Իբրև ազգային միասնության հստակ գիտակցման արտահայտություն՝ առաջին անգամ այն բարձրաձայն հնչել է Մ. Նալբանդյանի Կ. Պոլիս կատարած պատմական այցի՝ արևմտահայ իրականության վրա թողած խոր ազդեցության և ապա Ջեյթունի ապստամբության՝ արևելահայ իրականության վրա ունեցած պատասխան ազդեցության արդյունքում: Արդեն իսկ երկու ենթահինքությունների ձևավորման փաստի առջև կանգնած հայ հանրույթի երկու խոշոր հատվածներին հիմնավորապես ցնցած այս իրադարձությունների արդյունքում է, որ հետագայում Մ. Նալբանդյանը արևմտահայոց քաղաքական ընկալումների մեջ համարվել է **Միացյալի** համար պայքարի առաջին նահատակը:

Դրանից է սկիզբ առել նաև Մ. Պեշիկթաշլյանի՝ արդեն արևմտահայ իրականությունից բխող պատասխանը՝ «Եղբայր եմք մեք որ մըրըրկաւ էինք զատուած»³, որը հաջորդ տասնամյակում՝ 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ու Հայկական հարցի միջազգային դիվանագիտության ասպարեզ մտնելու օրերից, ձեռք է բերել իր նոր ու ավելի կոնկրետ կերպարանքը՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման և այն ողջ ազգի քաղաքական միասնության հիմնաքարի վերածելու առաջադրանքի տեսքով:

Նոր ժամանակներում միջազգայնորեն իբրև «Հայաստան» ճանաչված տարածքը նրա ամենախոշոր հատվածն էր՝ Արևմտյան Հայաստանը՝ սկսած 1878 թ. Սան Ստեֆանոյի պայմանագրից մինչև 1895 թ. Մայիսյան բարենորոգումների ծրագիրն ու 1914 թ. Ռուս - թուրքական համաձայնագիրը: Արևմտյան Հայաստանի ազատագրության համար պայքարում է, որ հայ ազգային կուսակցությունները բյուրեղացրել են Հայաստանի ամբողջականության մասին իրենց պատկերացումները: Ընդ որում, եթե 1887- ին հիմնված Հնչակյան կուսակցութ-

3 Սկրտիչ Պեշիկթաշլեանի քերթուածներն ու ճառերը, Փարիզ, «Անահիտ», 1904, էջ 93:

յունը առաջ է քաշել ոչ թե երկու, այլ միանգամից երեք՝ ռուսական, թուրքական ու պարսկական Հայաստանների միավորման առաջադրանքը, ապա ՀՅ Դաշնակցությունը, ընդհակառակը, իր չափավոր ծրագրերի, բայց արմատական գործելակերպի միջոցով նախ՝ ստեղծել է սեփական իրավունքների համար պայքարում միասնականացող **հայ քաղաքական ազգի** նոր բանաձևը և ապա՝ այն տեղափոխել է ֆիզիկա-աշխարհագրական իրողությունների հարթություն: ՀՅԴ քաղաքական պայքարի բովում է ծնվել հայերի այն նոր ընդհանրությունը, որի շրջագծում արևելահայը, արևմտահայը կամ պարսկահայն աստիճանաբար վերածվում էին մեկ հայրենիքի համար պայքարող միասնական ազգի ներկայացուցիչների: Ուստի խոսելով 1897 թվականին Խանասորի դաշտում արևմտահայերի վրեժը լուծելու համար նահատակված 19 ֆեդայիների մասին՝ Մ. Վարանդյանը հետագայում գրում էր. «19 նահատակներ հայոց աշխարհի բոլոր կողմերին...թուրքահայ, ռուսահայ, պարսկահայ: Վանեցի, շատախցի, համադանցի, մշեցի, գողթնեցի, դազախեցի, դվարցի, նոր-բայազետցի, ալեքսանդրապոլցի, թիֆլիզցի, դարաբաղցի, ախալցխացի, ախալքալակցի և այլն»⁴ :

Իսկ երբ 20-րդ դարասկզբին այդ նոր ընդհանրությունը՝ հայ քաղաքական ազգը, զգաց նաև Հայ եկեղեցու գույքի բռնագրավման պատճառով Ռուսաստանում ևս իրեն սպառնացող վտանգը, ՀՅԴ առաջնորդ Քրիստափոր Միքայելյանն իր «Կովկասահայի տագնապը» հոդվածում հնչեցրեց հետևյալ մարգարեական խոսքերը. «Պատռել է հարկաւոր քարտէզների վրայ այս կամ այն աւագակապետի կամքով գժւած սահմանները: Ջնջել է հարկաւոր այն աշխարհագրական ներկերը, որոնք մեզ բաժանում են իրարից եւ անոնք որոնք առհասարակ մշտական չեն, իսկ երբեմն շատ կարճատեւ են լինում: Ո՛չ մի բռնութիւն, ո՛չ մի հալածանք, ո՛չ մի սահման չէ կարող բաժանել մի ժողովուրդ, եթէ նա, տողորւած ընդհանուր շահերի գիտակցութեամբ, ունի նաեւ կռելու անսասան **վճռողականութիւն** եւ կապւած, **միացած** է դարերով սնւած ու պահպանւած ընդհանուր բնազդների ու զգացմունքների առողջ զարկերակով»⁵:

Հայ քաղաքական ազգի **մեկություն** այս հստակ սահմանումն արդեն Ռուսական առաջին հեղափոխության ու հայ-թաթարական կռիվների շրջանում հանգեցնում է նրան, որ եթե Խանասորի դաշտում արևելահայերն ու պարսկահայերն էին հասել արևմտահայերին օգնության, ապա հայ-թաթարական կռիվների շրջանում՝ Ղարաբաղում, Չանգեզուրում և Արարատյան դաշտավայրում արև-

4 Վարանդեան Միքայել, Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, հատ. Ա, ք. հրատ., Թեհրան, 1981 էջ 205:

5 Միքայելեան Քրիստափոր, Կովկասահայի տագնապը, «Յեղափոխականի մտքերը», Աթէնք, հրատ. Հ.Յ. Դաշնակցութեան, 1931, էջ 122-123:

մտահայ հայրուկները՝ Համազասպը, Քեռին, Սեբաստացի Մուրադը և մյուսներն էին մարտնչում արևելահայության ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար:

Բայց քայլ առ քայլ կերտելով հայ քաղաքական ազգի մեկության ըմբռնումը, ուրի համատեքստում ժողովրդի տարբեր հատվածները և նրանց առջև կանգնած խնդիրները կամ, ինչպես ժամանակին կուսակցության Ընդհանուր ժողովներն էին բանաձևում, **դատերը** հետապնդվում էին մեկ դրոշի՝ ՀՅԴ դրոշի տակ, Դաշնակցությունն ինքն էր իր ներսում արձանագրում մեզանում դարերով կարծրացած հատվածական մտածելակերպի ու գործելակերպի, այսինքն՝ **քաղաքական հատվածականության** հսկայական նստվածքի առկայությունը: «Կովկասյան նախագծի» ընդունումից հետո ու մանավանդ 1907-ին Վիեննայում տեղի ունեցած չորրորդ Ընդհանուր ժողովում դա սպառնում էր ոչ միայն կուսակցության, այլև ազգի միասնականությանը: Տարբեր աշխարհագրական միջավայրերում բնակվող, ուստիև տարբեր արտաքին ազդեցությունների տակ հայտնված ազգի առանձին հատվածների հաճախ միմյանցից բաժանվող քաղաքական ձգտումների համադրության համար ժամանակին ՀՅԴ-ն ունեցավ ոչ միայն բավարար կամք, այլև հմտություն:

Բայց բանաձևելով «երկու Հայաստանների» առկայության փաստից բխող իր քաղաքական առաջնահերթությունները՝ ՀՅԴ-ն չէր փորձում առաջ անցնել վտանգներով լի իրականությունից, այլ ստեղծում էր անհրաժեշտ նախադրյալներ՝ հաջորդ քայլին անցնելու և Միացյալ ու Անկախ Հայաստանի գաղափարը նվիրագործելու համար: Քանզի միջազգայնորեն արդեն իսկ ճանաչված Հայաստանի, տվյալ պատմաշրջանում՝ Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության ֆիզիկական գոյության վրա կախված սպառնալիքները բազմակի անգամ գերազանցում էին ազգի ներուժ կարողականությունը: Եվ ինչպես ցույց են տալիս թուրք պատմաբան Թաներ Աքչամի կողմից վերջերս գաղտնազերծված Թալեաթ փաշայի հեռագրական հրահանգները, հենց Հայաստանի, այսինքն՝ Արևմտյան Հայաստանի ոչնչացման առաջադրանքն էր դրված թուրք ցեղասպանների քաղաքական ծրագրերի հիմքում: Ուստի միջազգայնորեն ճանաչված և անգամ՝ Օսմանյան կայսրության՝ 1914-ի հունվարի 26-ին Ռուսաստանի հետ կնքած պայմանագրում ամրագրված Հայաստանի գոյությունը հարցականի տակ դնելու փաստը անխուսափելի էր դարձնում հայ ժողովրդի երկու հատվածների միացման խնդրի տեղափոխումը 1918-ին ծնված Հայաստանի Հանրապետության քաղաքական օրակարգ: Իսկ այդ ընթացքում ու դրանից հետո «երկու Հայաստանների» միավորման գաղափարից իբր՝ հրաժարվելու մասին ՀՀ-ին վերագրվող բոլոր հին ու նոր ամբաստա-

նությունները որևէ հիմք չունեն այն պարզ պատճառով, որ Բաթումի, իսկ հետագայում էլ՝ Ալեքսանդրապոլի պայմանագրերը ստորագրվել են ուժի գործադրմամբ ու նոր ցեղասպանության սպառնալիքով:

Սակայն Մեծ եղեռնի բերած վիշտն ու դառնությունը նոր և է՛լ ավելի տագնապալից վիճակ էին ստեղծել ներագգային գետնի վրա՝ ցեղասպանությունից փրկված ու Արևելյան Հայաստանում ապաստանած արևմտահայոց մնացորդացի ու արևելահայության փոխհարաբերություններում, որի պատկերավոր արտահայտությունը հետագայում Խմբապետ Շավարշի բերանով Ե. Չարենցի կողմից դառնությամբ հնչեցված հայտնի տողերն էին՝

«Ռուսահայ եղբայրները»... հա-հա'...

Ընդունեցին - թուրքից էլ վատ, այո՛:

«Ռուսահայ եղբայրները»... «Հայրենիք», Հայ».

Կուշտ, ականջները դինջ, ապահով»⁶ :

Ուստի այսօր փորձելով հասկանալ, թե ինչո՞ւ Անդրանիկը հրաժարվեց մասնակցել Ղարաքիլիսայի ճակատամարտին կամ օգնության հասնել իրեն Շուշի հրավիրած Ղարաբաղին՝ մենք մինչ օրս անտեսում ենք **քաղաքական հատվածականությանը** ծնունդ տված լրջագույն պատմա-քաղաքական շարժառիթները:

Այսպիսով, նախքան Հայաստանի Հանրապետության ձևավորումը, «Միացյալ և Անկախ Հայաստանի հայտարարման մասին» հռչակագրի ընդունումն ու Հայաստանի Խորհրդի կազմի լրացումով այն **պետական ակտի** վերածելը, Միացյալ Հայաստանի համար պայքարն ունեցել է խիստ հարուստ և ուսանելի պատմություն: Ուստի նրա դասերը կարելի է ամփոփել հետևյալ **եզրակացությունների** և դրանցից բխող **ապագայի կանխատեսումների** մեջ.

1. Ի տարբերություն միջնադարի՝ նոր ժամանակներում կրկին ֆիզիկա-աշխարհագրական կերպարանք ստացած **Միացյալի** մեր նոր ըմբռնումը, բախվելով Հայաստանը զավթած տերությունների ձևով՝ հակադիր, բայց իր էության մեջ՝ միասնական դիմադրությանը, ի վերջո հանգել է հայրենի հողի որոշակի հատվածում անկախ պետականության վերականգնման միջոցով հանգրվանային հողահավաքի իրականացման ռազմավարությանը:

2. 20-րդ դարասկզբին վերջինիս հաջողությունը կախված է եղել նրանից, թե Հայաստանի շուրջը ձևավորված քաղաքակրթական միջավայրը որքանո՞վ կհա-

6 **Եղիշե Չարենց**, Երկերի ժողովածու, հատ. 2, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1963, էջ 291:

մապատասխանի նրա քաղաքական ձգտումներին: Նրանում արմատական փոփոխությունների հույս ներշնչած Անտանտի ձևավորումը և Գերմանիայի ու նրա դաշնակից Թուրքիայի դեմ պատերազմում հաղթանակի անխուսափելիության գիտակցումը, հաշվի չի առել հետագայում ճակատագրական դարձած այն իրողությունը, որ Անտանտի ներսում ծավալվող սուր մրցակցության պայմաններում տվյալ քաղաքակրթական միջավայրի թույլ օղակը հանդիսացող Ռուսաստանը կանգնած է հեղափոխության միջոցով նրանից դիմաշրջվելու իրական վտանգի առջև:

3. Ռուսաստանի դուրս մղումը արևմտյան քաղաքակրթական տարածքից և ապա նրա 70-ամյա խորհրդային և 25-ամյա հետխորհրդային կամ եվրասիական դիմաշրջումներն ու կատակլիզմները Հայաստանի հողերի միասնականացման հարցը վերածել են համաշխարհային քաղաքականության մի պահեստային տարբերակի, որը կարող է կրկին խաղարկվել միայն մեկ պարագայում՝ Արևմուտք-Ռուսաստան ընդհանուր քաղաքակրթական տարածքի վերականգնման դեպքում: Ռուսաստանի խորհրդային և հետխորհրդային փորձարարությունների ձախողման ներկա ակնհայտ իրողությունը ու նրա քաղաքակրթական դիմաշրջման անխուսափելիությունը համաշխարհային ասպարեզում դանդաղորեն ուրվագծում են Հայկական հարցի վերաբացման համար անհրաժեշտ այն աշխարհաքաղաքական միջավայրը, որի ամբողջացման առաջին նախանշանների ականատեսն ենք մենք այսօր: Բայց Հայաստանի ու հայ ազգի համար դա լինելու է սոսկ նոր հնարավորություն, որի իրացումը հնարավոր է միայն զարգացման միջոցով հզորացող անկախ պետականության լիարժեք տեսլականը վերականգնելու պարագայում:

4. Միացյալ և Անկախ Հայաստանի մասին պետական ակտի ընդունման 100-ամյա հորելյանը մեր շուրջն առկա քաղաքակրթական միջավայրի փոփոխությանը համապատասխանող ներպետական ու ներազգային նոր առաջնահերթությունների հստակեցման ժամանակն է: Մեզ շրջապատող քաղաքակրթական միջավայրի աստիճանական փոփոխության արդյունքում փոխվում է նաև այն մրցակցային միջավայրը, որտեղ մինչ օրս ազգ-պետությունների հզորությունը չափվում էր երկրի տարածքի, բնակչության, և համախառն ներքին արդյունքի քանակական ցուցանիշներով, այսինքն՝ ի վերջո՝ «տանկերի քանակով»: Մինչդեռ՝ հետարդիականության դարաշրջանի գիտատեխնոլոգիական առաջընթացը նշանավորում է **որակի հաղթանակը՝ քանակի հանդեպ** որպես նոր գաղափար ու նրա իրացում՝ նոր տեխնոլոգիա: Սա մի այնպիսի հզոր «ցունամի» է, որը փլուզելու է ամենամեծ կայսրությունները, քանդելու է անխորտակելի թվացող աշխարհաքաղաքական իրողությունները և ստեղծելու է մի նոր

մարդկություն, որը ղեկավարվում է բարձր տեխնոլոգիաների ու դրանց համապատասխանող ինքնակազմակերպման նոր մեխանիզմների միջոցով:

5. Ուստի գիտատեխնոլոգիական հեղափոխության դարաշրջանում սեփական խնդիրները լուծելու համար հարկավոր է իբրև աշխարհայացքային մեկնակետ ընդունել այն իրողությունը, որ պատմության արագացման և որպես դրա հետևանք՝ տարածության ու ժամանակի կրճատման պայմաններում հաղթելու են այն ազգերն ու պետությունները, ովքեր կգտնեն բարձր տեխնոլոգիաների ու տեղեկատվության դարին համապատասխանող ինքնակազմակերպման նոր մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս համաշխարհային մրցահարթակներում գործարկել ազգի ներուժ կարողականության որակական ցուցանիշները՝ գիտելիքը, ինտելեկտը, արագ կողմնորոշվելու ունակությունը: Քանի որ համաշխարհային հարթակներում մրցունակ լինելու խնդրի լուծումը ազգի ցրվածությունը թուլությունից վերածում է ուժի, հայերս հնարավորություն ենք ստացել ոչ միայն վերականգնելու տարածաշրջանում գիտատեխնոլոգիական առաջընթացի կրողն ու միաժամանակ տարածողը լինելու՝ մեր ավանդական առաքելությունը, այլև մեր որակական առավելությունները վերածելու հարևանների հանդեպ ռազմա-տեխնիկական գերազանցության հասնելու վճռորոշ կովանի:

6. Նման համընթաց քամիները որսալու և սանձելու նպատակով հայ ազգը պետք է հրաժեշտ տա լավագույն դեպքում՝ նոր ժամանակներում ձևավորված ազգային միասնության մասին իր ներկա պարզունակ պատկերացումներին: Ազգի գիտակցության ու կեցության միջև առկա ակնհայատ խզվածքի պատճառով մեր միասնության ըմբռնումը ներկայումս պարփակվում է նախորդ դարերում ձեռք բերված **ինքնատիպության** հիմնական բաղադրիչների շրջագծում: Ուստի 21-րդ դարում պահպանողական դարձած նրա բովանդակությունը խորը հակասության մեջ է մտնում միասնաբար առաջադիմելու և նոր ու ավելի գրավիչ հայկականը երկնելու բնական ու բանական պահանջմունքի հետ: Պատճառն ակնհայտ է. քանի որ ազգային միասնությունը մեզանում դիտվում է իր ստատիկ հարթության վրա, պրոգրեսը համարվում է միասնության վրա կախված սպառնալիք: Մինչդեռ երբ ինքներս մեր ներսում պարփակվելու և առաջադիմության այլքից թաքնվելու տեղ ենք փնտրում, պրոգրեսն ինքն է անընդհատ կտորակում մեր մարմինը ֆիզիկական արտագաղթի և մշակութային ու հոգևոր տարանջատումների միջոցով: Այդ տարանջատումների հիմքը կազմող հին ու նոր կենսակերպերի բանավեճը ավանդական ազգային մտածելակերպը կրողներին աստիճանաբար դնում է 19-րդ դարավերջի պարոնյանական հերոսների վիճակում, որոնք այդպես էլ լուծումներ չգտան պրոգրեսի

դարաշրջանային կերպավորման՝ **ա լա ֆրանզայի** համար: Մինչդեռ՝ համաշխարհայինացումը՝ որպես նոր և ավելի հզոր **ա լա ֆրանզա**, մեզանից պահանջում է **Միացյալի** գաղափարը դեպի ապագա տեղափոխելու համար անհրաժեշտ ազգակերտման ու պետականակերտման նոր առաջնահերթություններ:

7. Իրականում, հայ ազգին բնորոշ՝ նորի ու առաջադիմականի հանդեպ սուր զգացողությունն է մեր քաղաքակրթական առավելությունը՝ բոլոր հարևանների հանդեպ: Այն իբրև եվրոպական լուսավորականության ու գիտատեխնիկական առաջադիմության առաջամարտիկի գործառույթ, դեռևս 19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկզբներին մեզ դարձրել էր տարածաշրջանի ամենակենսունակ ազգը, որը հրաշքներ էր գործում տնտեսության, կրթության ու մարդկային զարգացման այլ բնագավառներում: Պետականության բացակայության պատճառով Մեծ եղեռնն ու ռուսական հեղափոխությունները խորշակի նման ոչնչացրին այդ ամենը, իսկ մեզ մնացած տարածքներում ֆիզիկական գոյության ապահովման հրամայականը հարկադրեց առաջնորդվել միայն ինքնապահպանման բնագրով, որին հետևեցին օտարին ծառայության անցնելու և նրա գիտության ու տեխնոլոգիաների զարգացման շարժիչը դառնալու խորհրդային տարիները: Բայց այդ տարիներին ևս հայերը, իրենց սրտի խորքում ամուր կերպով պահելով Միացյալ Հայաստանի երազանքը, հրաշքներ գործեցին գերտերությունների գիտական հաստատություններում ու ինժեներական լաբորատորիաներում: Ու քանի որ մենք անկախ երկիր չէինք, ԽՍՀՄ փլուզման հետևանքով այդ ամենի զգալի մասը նորից կորցրինք և Ղարաբաղյան պատերազմի օրերին ստիպված էինք սովորական «Կալաշնիկով» ավտոմատներով ելնել քանակով մեզ գերազանցող հակառակորդի դեմ՝ փաստորեն ոչնչով չտարբերվելով կրթությունից զուրկ թափառական բեդվիններին ազգի վերածած Յասեր Արաֆաթի մարտիկներից:

Բայց դրանից հետո էլ մենք չգիտակցեցինք, որ ԽՍՀՄ-ին ամենաժամանակակից գինատեսակներ պարզևած ազգի համար ուղղակի ամոթ էր այդքան թանկագին զոհեր տալ ռազմի դաշտում, երբ իր նախորդ ձեռքբերումների գոնե մի մասը անկախացման շրջանում նա կարող էր օգտագործել իր համար: Մարդկային ամենամեծ կապիտալի՝ փայլուն ուղեղների առկայության պայմաններում հնարավոր էր ունենալ արդիական զենքեր, որպեսզի խնայվեին մեր ֆիդայիների ու զինվորների թանկագին կյանքերը: Քանզի անկախացումից ընդամենը մի քանի տարի առաջ Հայաստանի գործարաններում ատոմային սուզանավերի մասեր էին արտադրվում, մեր երկրում գործում էր լազերային տեխնիկայի ինստիտուտ, իսկ հայ գիտնականները առանցքային դիրքեր էին զբաղեցնում միջուկային ֆիզիկայի բնագավառի առաջամարտիկ մերձնուսկոլյան Դուբնայում, ինչպես նաև խորհրդային ինք-

նաթիռաշինության ու հրթիռաշինության ամենակարևոր նախագծային ու արտադրական հաստատություններում:

8. Հայաստանն իր տնտեսական, ժողովրդագրական ու դրանցից բխող՝ ռազմական ներուժ կարողականության քանակական չափորոշիչներով տեսանելի ապագայում ոչ միայն չի կարող համեմատվել իր հիմնական հակառակորդների հետ, այլև բնական ռեսուրսների սակավության ու ժողովրդագրական աճի ոչ բարձր տեմպերի պատճառով շարունակելու է հետ մնալ նրանցից մինչև այն պահը, երբ նրա քաղաքական ղեկավարության մեջ ու հիմնական քաղաքական ուժերի շրջանում չձևավորվի **համազգային կոնսենսուս** մեզանում տեխնոլոգիական հասարակության ձևավորման համար անհրաժեշտ քաղաքական, տնտեսական ու մշակութային առաջնահերթությունների շուրջ: Միայն նման հասարակության ձևավորումը և որպես դրա արդյունք՝ հայ ժողովրդի կողմից դարերով կուտակված **որակական ռեսուրսների** միջոցով՝ մեր հակառակորդների հանդեպ գիտատեխնոլոգիական գերազանցության ապահովումը թույլ կտան ապագայում նաև ռազմի դաշտում չափվել քանակապես մեզ բազմակի անգամ գերազանցող հարևանների հետ և վառ պահելով Միացյալ Հայաստանի գաղափարը՝ հասնել նրա հանգրվանային իրականացմանը:

9. Իսկ դա նշանակում է՝ **Միացյալի** տեսլականը անցյալից ապագա տեղափոխելու համար մենք ոչ թե պետք է փարվենք ազգայինի պահպանողական ընկալմանը, ոչ թե պետք է ազգային ավանդույթի ձևախեղված ընկալումներն առաջադիմությանը հակադրելու միջոցով՝ մեկուսանանք մեր դուռը բախող հետարդիականության դարաշրջանից, ոչ թե պետք է դիմաշրջվենք արդի գիտատեխնոլոգիական առաջընթացը պայմանավորող նրա հիմնական տնտեսաքաղաքական չափորոշիչներից, այլ փնտրենք ու գտնենք դրանք Հայաստան տեղափոխելու ու հայրենի հողի վրա կերպավորելու սեփական, ազգային բնորոշ՝ հայկական քաղաքակրթության **համադրական գործառույթի**⁷ վերականգնման միջոցով:

Դեպի Միացյալ Հայաստան տանող ճանապարհն ուրվագծվում է միայն ու միայն առաջադիմության ու նորացման մեծ մայրուղու վրա: Մնացած ուղիները մեզ տանում են դեպի մեկուսացում ու նոր հնարավորությունների կորուստ:

7 Այդ գործառույթի վերականգնման հիմնական գաղափարական ուղենիշերի մասին տե՛ս մեր «Ազգային և ազգային-պետական գաղափարախոսություն» գրքույկը, Եր. 2003:

Գևորգ Ս. Խոսրոսյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են Հայոց Նոր պատմության առանցքային հիմնահարցերը, այդ թվում՝ հայ ազգային-ազատագրական շարժման, Հայկական հարցի և Հայաստանի Հանրապետության պատմությունը: Հրապարակել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ հայ ազգային կուսակցությունների և առաջին հերթին՝ ՀՅ Դաշնակցության պատմության ու գաղափարախոսության վերաբերյալ: Զբաղվում է նաև Հայոց պատմության պատմագրության և պատմության տեսության ու մեթոդաբանության հիմնախնդիրների հետազոտությամբ:

Summary

THE VISION OF UNITED ARMENIA

From Past to Future

Gevorg S. Khoudinyan

Key words – United Armenia, Armenia Major, civilized environment, sanctified area, the European Enlightenment, Armenian political nation, scientific-technological progress, nationwide consensus, technological society.

Each epoch in Armenian history had, relatively speaking, its own perception of “United” beginning from the nevertheless imperfect wish of uniting Armenia Major and Armenia Minor up to the unification of Eastern and Western Armenia, as well as, today’s political task of enclosing the Republic of Armenia and Artsakh in one state-political vessel. Alongside with this our persistent struggle for “Unity” in the diachronic scope of Armenian history has up to now shown only one result, i.e. the successive fall of Armenian kingdoms, the expulsion of Armenians from Western Armenia, the fall of the First Republic of Armenia. Here a question rises whether the reason of such downfalls was our wish of restoring unity or there have been other, rather objective reasons.

The loss of “Unity” as an expression of ontological crisis that has crept up the Armenians has been the result and consequence of permanent change in the civilized environment surrounding Armenia. By acknowledging our own powerlessness against such objective challenge we started to look for new paradigms of our unity instead of physical-geographical standards, that is, trying to compensate the loss of political basis of self-organization by means of spiritual, cultural, economic and other arguments.

Our great thinkers of the medieval period considered the primary basis for defining “nation” not as much the area, language and kinship but rather the faith and

church tradition, that is doctrine, rituals and ceremonies. In new times the scientific basis for restoring the political Armenia as an entity was founded by the Mkhitarist fathers in Venice while the value-civilization pillars for that new unity of Armenia and Armenians were created on the basis of ideas of the European Enlightenment. By encountering the resistance, which was contrasting in form but united in its essence, of powers that have conquered Armenia this new perception of unity finally came up to the strategy of exercising asylum land collection through the restoration of independent statehood on the certain part of national land.

Thus it went on up to nowadays when the hopeful realities of the restoration of the West-Russia common civilization area began to emerge. Therefore the 100th anniversary of the adoption of the state act of United and Independent Armenia must bring our political consciousness which is deep in sand of routine closer to the height of new interstate and international priorities that correspond to the circumstantial changes of civilized environment that surrounds us.

Armenia is unable to be compared with its main rivals in terms of its economic, demographic and quantity standards of military capability deriving from them and because of scarcity of natural resources and low rates of demographic growth will continue to lag behind them. Hence a nationwide consensus must be formed in its political leadership and among main political forces for the creation of technological society with its needful political, economic and cultural priorities.

Only due to the usage of quality resources accumulated by the Armenian people through centuries and the formation of technological society in Armenia it is possible to secure the proper scientific-technological dominance in the region which will allow us also to compete in the battlefield with our neighbours that outnumber us and bring to life the idea of United and Independent Armenia.

Резюме

ИДЕАЛ ЕДИНОЙ АРМЕНИИ

Из прошлого в будущее

Геворг С. Худинян

Ключевые слова – Единая Армения, Великая Армения, цивилизационная среда, освященная территория, европейское Просвещение, армянская политическая нация, научно-технологический прогресс, общенациональный консенсус, технологическое общество.

Каждая эпоха истории Армении имела, говоря условно, свое понимание «Единой» - от так и оставшегося нереализованным желанием объединения Вели-

кой и Малой Армении до политической задачи включения в один государственно-политический сосуд Восточной и Западной Армении, а ныне – Республики Армения и Арцаха. Вместе с тем, наша упорная борьба за «Единую» на диахронической плоскости истории Армении до сегодняшнего дня проявляет лишь одно последствие – падение следующих друг за другом царств, деарманизация Западной Армении, падение первой Республики Армения. Возникает вопрос: причиной таких низвержений послужило желание восстановить единство нашей Родины, или на то были другие, вполне объективные причины?

Как выражение онтологического кризиса армянства утрата «Единой» была результатом и следствием перманентного изменения цивилизационной среды, окружающей Армению. Сознвая наше собственное бессилие перед подобным объективным вызовом, вместо физико-географических критериев мы стали искать новые парадигмы нашего единства, пытаясь компенсировать потерю политических основ самоорганизации посредством духовных, культурных, экономических и других рычагов.

Наши великие мыслители Средневековья первичным основанием для определения понятия «нация» считали не столько территорию, язык и родственные связи, но веру и церковную традицию, то есть теологию, ритуалы и обряды. В Новое время научные основы восстановления политического понимания единства Армении были заложены отцами-мхитаристами, обосновавшимися в Венеции, а ценностно-цивилизационные опорные столбы формирования этого единства были созданы на основе идей европейского Просвещения. Это новое восприятие «Единой», столкнувшись с различным по форме, но единым по своей сути сопротивлением захвативших Армению держав, в конце концов пришло к стратегии поэтапного собирания земель посредством восстановления независимой государственности на определенном участке родной земли.

Так продолжалось вплоть до наших дней, когда начали проявляться обнадеживающие реалии восстановления общей цивилизационной среды Запад-Россия. Следовательно, 100-летний юбилей принятия государственного акта о Единой и Независимой Армении должен приблизить наше политическое сознание, завязшее в трясине повседневности, к высоте новых внутригосударственных и внутринациональных приоритетов, соответствующих основательной перемене цивилизационной среды вокруг нас.

Армения не может сравниться со своими основными противниками количественными критериями своих экономических, демографических и вытекающих из них военных возможностей, а вследствие малого количества природных ресурсов и невысоких темпов демографического роста, продолжит отставать от них. Следовательно, в его политическом руководстве и в кругу основных поли-

тических сил должен быть сформирован общенациональный консенсус по основным политическим, экономическим и культурным приоритетам, необходимым для создания технологического общества.

Только с использованием качественных ресурсов, веками накопленных армянским народом, и формированием в Армении технологического общества возможно обеспечение собственного научно-технологического превосходства, что позволит также на поле брани мериться с количественно многократно превосходящими соседями и достичь поэтапной реализации идеи Единой и Независимой Армении.

REFERENCES

1. **Xudinyan G.**, Azgayin yev' azgayin-petakan gaxap'araxosut'yun, Ye'r., 2003 (in Armenian).
2. **Griror Tat'evaci**, Girq haremanc, K. Polis, 1729 (in Armenian).
3. **Miqayelean Qristap'or**, Kovkasahayeri tagnapə, "Hegh'ap'oxakani mtqerə", At'enq, hrat. H.Y. Dash'nakcut'ean, 1931 (in Armenian).
4. Mkrtich' Pesh'ikt'ash'leani qertuac'nern u c''ar'erə, P'ariz, "Anahit", 1904 (in Armenian).
5. **Varandean Miqayel**, H.Y. Dash'nakcut'ean patmut'iun, hat. A, B. hrat., T'ehran, 1981 (in Armenian).
6. **Ye'gh'ish'e Ch'arenc**, Ye'rkeri zh'ogh'ovacu, hat. 2, Ye'r., HSSR' GA hrat., 1963 (in Armenian).